ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Ա. Դաղբաշյան

«31» օգոստոսի 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Հ.Հ. Լոռու մարզի քաղաքի Վանաձորի

Մարզ համայնք

Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հ/դ VIII^{ա} դաս.

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Արմինե Վրույրի Կոստանդյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ* (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2023- 2024 ուս. տարում VIII^{ա} դասարանում սովորում են թվով 25 աշակերտ, որոնցից 11 տղա և 14 աղջիկ: Աշակերտների մեծ մասն ապահովված են դասագրքերով: Դասարանում կան սոցիալապես անապահով, նպաստառու ընտանիքների երեխաներ: Դասարանում կատարվում են տարբեր բնույթի կազմակերպչական աշխատանքներ՝ ապահովելով ջերմ և համերաշխ մթնոլորտ: Նրանք բոլորն էլ պարտաճանաչ աշակերտներ են: Բոլորն էլ ընկերասեր են և սիրում են ազատ ժամանակը միասին անցկացնել: Աշակերտներից ոմանք լավ ասմունքում են, ոմանք էլ՝ լավ նվագում: Աշակերտների մի մասը սիրում է ազատ ժամանակն անցկացնել ընթերցանությամբ: Դասարանում իշխում է համերաշխությունը, հարգանքը միմյանց և ուսուցիչների հանդեպ: Դասարանում նշանակվել է ավագ՝ Միքաելյան Եվան: Երեխաները ընկերասեր են, պատրաստակամորեն կատարում են ուսուցչի հանձնարարությունները:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Պետք է հետևել դասարանի սանիտարական վիճակին: Մեծ ուշադրություն դարձնել առաջադիմության բարձրացմանը , դասարանական կոլեկտիվի համախմբմանը: Ապահովել անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող հոգեբանա- մանկավարժական միջավայր , իրականացնել անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը ուղղված քայլեր:: Ձևավորել բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերություններ սովորողների, սովորողների և մանկավարժների միջև: Ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ:

Կազմակերպել հայրենասիրական ուղղվածության և մշակութային արժեքներին ծանոթացնող էքսկուրսիաներ: Ի հայտ բերել աշակերտների նախասիրությունները և ընդգրկել նրանց հասարակական աշխատանքներում: Օգնել աշակերտներին զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները, ինչը կնպաստի նրանց՝ հետագայում հասարակության մեջ արդյունավետ ինտեգրմանը:

Շաբաթական 1 ժամ անցկացնել դասղեկի ժամ: Հրավիրել ծնողական ժողովներ, ընտրել ծնողխորհուրդ՝ նախագահ և անդամներ: Ամրապնդել ծնող-աշակերտ-ուսուցիչ կապը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Անհրաժեշտ է ձևավորել անձ, ով գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների , ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, գիտակցի, որ գիտությունը, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում: Սովորեցնել, որ մշակույթային արժեքները փոխանցվում են հոգևոր դաստիրակության միջոցով: Դասարանում ունենալ Հայաստանի դրոշը և զինանշանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ: էքսկուրսիաների, արշավների միջոցով երեխաների մոտ ձևավորել գեղագիտական գիտակցություն, գեղարվեստական ճաշակ և, որ շրջակա միջավայրում կարողանան տեսնել գեղեցիկը, բարին : Կարողանան գեղեցիկի ոլորտում դրսևորվել և այն ստեղծել:

3.3Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ձևավորել քաղաքացի, ով հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
Դպրոցում երեխայի մոտ դաստիարակել հայրենիքին անշահախնդրորեն ծառայելու ձգտումը: Ակտիվ մասնակցել դպրոցում կազմակերպված ռազմահայենասիրական միջոցառումներին:

3.4Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը առաջին հերթին ուղղված է առողջության ամրապնդման , օրգանիզմի ձևի և ֆունկցիաների ներդաշնակ զարգացմանը, ճիշտ կեցվածքի ձևավորմանը: Աշակերտը պետք է մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը: Հետևաբար պետք է միշտ պատրաստակամ մասնակցեն ֆիզկուլտուրայի դասերին, որպեսզի կարողանան ձևավորել կամային բարձր որակներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը կարևոր գործունեություն է: Պետք է ձևավորել անձ, ով դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, աշխատանքի հանդեպ ճիշտ վերաբերմունք, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը, աշխատանքին հոգեբանորեն նախապատրաստել, քանի որ դրա միջոցով է երեխան փորձում ինքնահաստատվել, շփվել մեծահասակների հետ, ձևավորել սեփական եսը, մասնագիտական կողմնորոշում ձեռք բերել:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ: Ձևավորել անձ, ով գիտակցի բնության պահպանման, շրջակա միջավայրի չաղտոտման կարևորությունը: Պետք է գիտակցեն, որ առանց բնության կյանք չկա, սիրեն բնությունը, դառնան նրա մի մասնիկը, հոգատար վերաբերմունք դրսևորեն բնության նկատմամբ, մասնակցեն ծառատունկերին, կանաչապատման աշխատանքներին, <<մաքուր բնություն>> ծրագրերին, հաճախակի լինեն բնության գրկում:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Հետևաբար պետք է ստեղծել ամուր կապ ուսուցիչ-աշակերտ-ծնող փոխհարաբերություններում: Աշակերտը պետք է գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, դրսևորի արժանավայել պահվածք, գիտակցի ծնողների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը:
Ծանոթանալ աշակերտների ընտանեկան կարգավիճակին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Կազմակերպել դպրոցական աշխատանքները պատշաճ ձևով, կահավորել դասասենյակը, աշակերտներին ապահովել դասագրքերով	օգոստոս	Դասղեկ
II	Գիտելիքի օր	սեպտեմբեր	Դասղեկ
III	Վ. Համբարձումյանի կյանքի և գործունեության մասին ֆիլմի դիտում	սեպտեմբեր	Դասղեկ
IV	Քննարկում՝ «2020 թվականի պատերազմն ու նրա դասերը»,« Պատերազմով խաթարված պատանեկություն» թեմաներով, այց հու-ահամալիր	սեպտեմբեր	Դասղեկ
V	«Անկախության տոն »	սեպտեմբեր	Դասղեկ
VI	Ուսուցչի դերը և կարևորությունը անհատի ձևավորման մեջ	հոկտեմբեր	Դասղեկ
VII	Զրույց <<Իմ քաղաքի պատմությունը, շնորհավոր տոնդ իմ քաղաք>> թեմայով	հոկտեմբեր	Դասղեկ
VIII	Զրույց-խաղ «Վատ և լավ սովորություններ, նրանց տարբերակելու կարևորությունը» թեմայով	հոկտեմբեր	Դասղեկ
IX	Քննարկում << Նպատակներ և հաջողության հասնելու գրավականը» թեմայով	նոյեմբեր	Դասղեկ
X	Զբոսանք « Հրաժեշտ ոկեզօծ աշնանը»	նոյեմբեր	Դասղեկ
XI	Զրույց <<Հայտնի և անհայտ մարդկանց հետաքրքրությունները >> թեմայով:	նոյեմբեր	Դասղեկ
XII	Զրույց-քննարկում « Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները »	նոյեմբեր	Դասղեկ
XIII	Երկրաշարժի օր	դեկտեմբեր	Դասղեկ
XIV	Զրույց <<Իմ երկրի պատմության էջերը >> թեմայով	դեկտեմբեր	Դասղեկ
XV	Ամանորյա ներկայացումների մասնակցություն	դեկտեմբեր	Դասղեկ

XVI	Զրույց՝ << ՀՀ բանակի կազմավորումը>> թեմայով: Ֆիլմի դիտում ՝ << Հայոց բանակ>>:	հունվար	Դասղեկ
XVII	Զրույց՝ <<Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները>> թեմայով:	հունվար	Դասղեկ
XVIII	Առնո Բաբաջանյան:Երաժշտության ունկնդրում: Ինչպիսի երաժշտություն եմ նախընտրում:	հունվար	Դասղեկ
XIX	Ինչպիսին եմ պատկերացնում ապագաս:	հունվար	Դասղեկ
XX	Աշակերտների հետաքրքրություններն ու նախասիրությունները: Ինչպես են սիրում անցկացնել իրենց ազատ ժամանակը:	փետրվար	Դասղեկ
XXI	Զրույց՝ <<Կրթության անհրաժեշտության և յուրաքանչյուր առարկայի կարևորության մասին>> թեմայով:	փետրվար	Դասղեկ
XXII	Զրույց 44-օրյա պատերազմի հերոսների մասին	փետրվար	Դասղեկ
XXIII	Զրույց – քննարկում <<Գիրքը տիեզերք է» թեմայով	փետրվար	Դասղեկ
XXIV	Հիշենք Վազգեն Սարգսյանին	Մարտ	Դասղեկ
XXV	Խոհեր այցելած պատմական վայրերի մասին	Մարտ	Դասղեկ
XXVI	Թատրոնի միջազգային օր	Մարտ	Դասղեկ
XXVII	Իմ մայրիկը…/ կնոջ դերը ընտանիքում…/:	ապրիլ	Դասղեկ
XXVIII	Ի՞նչ է ընկերությունը: Իմ ընկերները:	ապրի	Դասղեկ
XXIX	Զրույց՝ Մաքուր բնության անհրաժեշտության և կարևորության մասին: Ծառատունկ	ապրի	Դասղեկ
XXX	Զրույց՝ <<Համակարգչի և բջջային հեռախոսների դերը մեր կյանքում>> թեմայով:	ապրի	Դասղեկ
XXXI	Երկրներ, որտեղ կցանկանայի լինել…	մայիս	Դասղեկ
XXXII	Ձեռքբերումների ամփոփում	մայիս	Դասղեկ
XXXIII	Ի՞նչ է ազատությունը, անկախությունը	մայիս	Դասղեկ
XXXIV	Ուստարվա արդյունքների ամփոփում:Դասագրքերի հանձնում	մայիս	Դասղեկ

: